ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՖՆ-ԵՄԱՊՁԲ-25/1

«17» 12 2025 թ.

ք. Երևան

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հայկ Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Անթա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արտակ Շահինյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 31,800,000 (երեսունմեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով

Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսվող ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի նախավերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 366-րդ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Անթա» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, ք.Երևան, Աջափնյակ Գ.Չաուշ
ՀՎՀՀ՝ 02629081	հասարակական տարածք 11/5
Հ/Հ 900011018539	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ՝ 1570092716837100
ՖՆ գլխավոր քարտուղար	ՀՎՀՀ 08276453
	տնօրեն՝
----------Հ. Հայրությունյան	---------- Ա. Շահինյան
/ստորագրություն/ Կ.Տ.	/ստորագրություն/ Կ.Տ.

«17» 12 2025 թ. կնքված ծածկագրով պայմանագրի
Հավելված N 1

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց

Ապրանքի							
Հ/հ	Անվանումը	CPV կոդը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Մատակարարման հասցեն	Մատակարարման ժամկետը
1	Ղեկավարի աշխատասենյակի կահույք	39138400/501	Տեխնիկական բնութագիրը ներկայացվում է ստորև*	լրակազմ	1	ք. Երևան Մելիք-Ադամյան 1	Ապրանքների մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցների առկայության դեպքում, դրա հիման վրա կողմերի միջև կնքվելիք համաձայնագրով նախատեսվող իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

*Տեխնիկական բնութագիր

Հ/Հ	Անվանումը/բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Դիզայնի նախագծում էջի ծածկագիրը
1	**Պահարան (շարժական):** Պահարանը պետք է պատրաստված լինի ներկված մդֆ-ից, գույնը՝ ըստ դիզայնի նախագծի: Պետք է ունենա քաշովի և բաց դարակներ, մետաղական ոտքեր և անիվներ (4 հատ): **Չափսերը՝** • լայնությունը՝ 90 սմ, • խորությունը՝ 60 սմ, • բարձրությունը՝ 75 սմ:	հատ	1	Կ.10

2	**Գրասենյակային հեռախոսախցիկ (Office call box):** Խելացի և ձայնամեկուսիչ, մեկ անձի համար նախատեսված, գրասենյակային հեռախոսախցիկ, որը նախատեսված պետք է լինի հեռախոսազանգերի և տեսազանգերի համար: Պետք է ունենա՝ A-դասի ձայնամեկուսացում՝ 30 դբ, խոսքի մակարդակի նվազում հարմարվողական օդային հոսք՝ 36 լ/վրկ, առավելագույն օդափոխության արագություն Էներգիայի ազդեցությունը՝ 27 Վտ Ավտոմատ լուսավորություն Ջերմաստիճանի և խոնավության հայտնաբերում Զբաղվածության սենսորներ **Չափսերը՝** • լայնությունը՝ 100 սմ, • խորությունը՝ 103 սմ, • բարձրությունը՝ 205 սմ: **Գույնը և կառուցվածքը՝ ըստ դիզայնի նախագծի:**	հատ	1	Կ.10
3	**Բազկաթոռ:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 68 սմ, • խորությունը՝ 68 սմ, • առավելագույն բարձրությունը՝ 114 սմ, • նստատեղի լայնություն՝ 50 սմ, • նստատեղի խորություն՝ 40 սմ, • նստատեղի նվազագույն բարձրությունը՝ 46 սմ, • առավելագույն նստատեղի բարձրություն՝ 56 սմ: **Գույնը՝ մուգ մոխրագույն/սև մետաղ.** Նյութեր. Հետևի շրջանակ՝ շերտավոր սոսնձված փայտի երեսպատում Նստատեղի շրջանակ՝ պողպատ Հետևի գոտի՝ պողպատ, ակրիլային ներկ Մեխանիզմ՝ պողպատ, ացետալային պլաստիկ, ամրապնդված պոլիամիդային պլաստիկ, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Հիմք նստատեղի՝ ալյումին, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Մեջքի փրփուր/ Նստատեղի փրփուր/ Նստատեղի բարձ՝ բարձր դիմացկուն պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 65 կգ/խմ Կեռիկ և օղակաձև ամրակ՝ 100% նեյլոն Նստատեղի երեսպատում՝ ոչ հյուսված պոլիպրոպիլեն Կայծակաճարմանդ/Թել՝ 100% պոլիեսթեր	հատ	4	Կ.66.1

	Բազկակալի ամրակ/ Ծածկոց/ Ներքին շրջանակ/ Բազկակալի շրջանակ/ Կոճակ՝ ամրապնդված պոլիամիդային պլաստիկ Թևնոցի բարձիկ՝ սինթետիկ կաուչուկ Կտոր՝ 100% պոլիեսթեր (նվազագույնը 90% վերամշակված) Պետք է համապատասխանի EN 1335 և ANSI/BIFMA x5.1: ստանդարտներին:			
4	**Բազկաթոռ:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 68 սմ, • խորությունը՝ 68 սմ, • առավելագույն բարձրությունը՝ 114 սմ, • նստատեղի լայնություն՝ 50 սմ, • նստատեղի խորություն՝ 40 սմ, • նստատեղի նվազագույն բարձրությունը՝ 46 սմ, • առավելագույն նստատեղի բարձրություն՝ 56 սմ: **Գույնը՝ փիրուզագույն/սև մետաղ.** Նյութեր. Հետևի շրջանակ՝ շերտավոր սոսնձված փայտի երեսպատում Նստատեղի շրջանակ՝ պողպատ Հետևի գոտի՝ պողպատ, ակրիլային ներկ Մեխանիզմ՝ պողպատ, ացետալային պլաստիկ, ամրապնդված պոլիամիդային պլաստիկ, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Հիմք նստատեղի՝ ալյումին, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Մեջքի փրփուր/ Նստատեղի փրփուր/ Նստատեղի բարձ՝ բարձր դիմացկուն պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 65 կգ/խմ Կեռիկ և օղակաձև ամրակ՝ 100% նեյլոն Նստատեղի երեսպատում՝ ոչ հյուսված պոլիպրոպիլեն Կայծակաճարմանդ/Թել՝ 100% պոլիեսթեր Բազկակալի ամրակ/Ծածկոց/ Ներքին շրջանակ/Բազկակալի շրջանակ/Կոճակ՝ ամրապնդված պոլիամիդային պլաստիկ Թևնոցի բարձիկ՝ սինթետիկ կաուչուկ Կտոր՝ 100% պոլիեսթեր (նվազագույնը 90% վերամշակված) Պետք է համապատասխանի EN 1335 և ANSI/BIFMA x5.1: ստանդարտներին:	հատ	4	Կ.66.1

5	**Աթոռ:** Չափսերը՝ • լայնությունը՝ 68 սմ, • խորությունը՝ 68 սմ, • առավելագույն բարձրությունը՝ 92 սմ, • նստատեղի լայնությունը՝ 53 սմ, • նստատեղի խորությունը՝ 41 սմ, • նստատեղի նվազագույն բարձրությունը՝ 43 սմ, • նստատեղի առավելագույն բարձրությունը՝ 53 սմ: **Գույնը՝ բեժ:** Նյութեր. Նստատեղ՝ պողպատ, Նստատեղի փրփուր՝ բարձր դիմացկուն պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 65 կգ/խմ Կտոր՝ 100% պոլիեսթեր (նվազագույնը 90% վերամշակված) Ոտքեր և անիվներ՝ ալյումին, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Կողպեքի մեխանիզմ՝ պողպատ, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում: Այս աթոռը փորձարկվել է հանրային օգտագործման համար և համապատասխանում է հետևյալ ստանդարտներում սահմանված անվտանգության, դիմացկունության և կայունության պահանջներին՝ Պետք է համապատասխանի EN 16139-մակարդակ 1 ստանդարտին:	հատ	11	Կ.66.1
6	**Բազկաթոռ:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 68 սմ, • խորությունը՝ 68 սմ, • առավելագույն բարձրությունը՝ 104 սմ, • նստատեղի լայնությունը՝ 53 սմ, • նստատեղի խորությունը՝ 41 սմ, • նստատեղի նվազագույն բարձրությունը՝ 43 սմ, • առավելագույն նստատեղի բարձրությունը՝ 53 սմ: **Գույնը՝ բեժ/սև** Նյութեր. Նստատեղ՝ պողպատ Նստատեղի փրփուր՝ բարձր դիմացկուն պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 65 կգ/խմ Կտոր՝ 100% պոլիեսթեր (նվազագույնը 90% վերամշակված) Ոտքեր և անիվներ՝ ալյումին, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում	հատ	12	Կ.66.1

	Կողպեքի մեխանիզմ՝ պողպատ, պողպատ, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Ձեռքի հենարանների զույգ՝ ալյումին, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Պետք է համապատասխանի EN 16139-մակարդակ 1 ստանդարտին:			
7	**Բազկաթոռ:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 68 սմ, • խորությունը՝ 68 սմ, • առավելագույն բարձրությունը՝ 104 սմ, • նստատեղի լայնությունը՝ 53 սմ, • նստատեղի խորությունը՝ 41 սմ, • նստատեղի նվազագույն բարձրությունը՝ 43 սմ, • առավելագույն նստատեղի բարձրությունը՝ 53 սմ: **Գույնը՝ մուգ մոխրագույն/սև** Նյութեր. Նստատեղ՝ պողպատ Նստատեղի փրփուր՝ բարձր դիմացկուն պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 65 կգ/խմ Կտոր՝ 100% պոլիեսթեր (նվազագույնը 90% վերամշակված) Ոտքեր և անիվներ՝ ալյումին, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Անիվներ՝ պոլիպրոպիլենային պլաստիկ, սինթետիկ կաուչուկ Կողպեքի մեխանիզմ՝ պողպատ, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Ձեռքի հենարանների զույգ՝ ալյումին, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Պետք է համապատասխանի EN 16139-մակարդակ 1 ստանդարտին:	հատ	3	Կ.66.1
8	**Բազկաթոռ:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 72 սմ, • խորությունը՝ 72 սմ, • նստատեղի լայնությունը՝ 54 սմ, • նստատեղի խորությունը՝ 45 սմ, • նստատեղի նվազագույն բարձրությունը՝ 47 սմ, • առավելագույն նստատեղի բարձրությունը՝ 53 սմ: **Գույնը՝ մուգ մոխրագույն** Նյութեր. Միացնող թիթեղ/ Մեխանիզմ/ Գազի բալոն/ Աստղային հիմքով հանգույց/ Աստղային հիմքով ոտք՝ պողպատ,	հատ	1	Կ.66.2

	էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Նստատեղի շրջանակ/ զսպանակ՝ պողպատ Բարձիկ/հարմարավետ լցոնում՝ պոլիուրեթանային փրփուր 35 կգ/խմ Նստատեղ՝ շերտավոր սոսնձված փայտի երեսպատում Կտոր՝ 100% պոլիեսթեր, ոչ հյուսված պոլիպրոպիլեն Բամբակ՝ պոլիեսթերային բամբակ Կեռիկ և օղակաձև ամրակ՝ 100% պոլիեսթեր Ծածկոց/Ներդիր՝ պոլիպրոպիլենային պլաստիկ Աստառապատում՝ ոչ հյուսված պոլիպրոպիլեն Միջուկի լցոնում՝ պոլիուրեթանային փրփուր 35 կգ/խմ Թևնոցի շրջանակ/ Մոնտաժային թիթեղ՝ պողպատ Ծածկույթի կափարիչ՝ պոլիպրոպիլենային պլաստիկ Պետք է համապատասխանի EN 16139-մակարդակ 1 ստանդարտին:			
9	**Բազկաթոռ:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 61 սմ, • խորությունը՝ 53 սմ, • բարձրությունը՝ 82 սմ, • նստատեղի լայնությունը՝ 44 սմ • նստատեղի խորությունը՝ 40 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 49 սմ: **Գույնը՝ մոխրագույն** Մետաղե (պողպատե) բոլոր տարրերը՝ սև գույնի Նյութեր. Կտոր՝ 100% պոլիեսթեր (նվազագույնը 90% վերամշակված) Նստատեղի բարձիկ՝ բարձր դիմացկուն պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 60 կգ/խմ Ոտք՝ պողպատ, պոլիէթիլենային պլաստիկ, էպօքսիդային/պոլիեսթերային փոշեպատում	հատ	1	Կ.66.2
10	**Բազկաթոռ:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 61 սմ, • խորությունը՝ 53 սմ, • բարձրություն՝ 82 սմ, • նստատեղի լայնությունը՝ 44 սմ, • նստատեղի խորությունը՝ 40 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 49 սմ: **Գույնը՝ բաց շագանակագույն**	հատ	2	Կ.66.2

	Մետաղե (պողպատե) բոլոր տարրերը՝ սև գույնի Նյութեր. Կաշի՝ ներկված կաշվի միջոցով՝ մշակված, դրոշմված Ծածկված գործվածքի մասեր՝ 100% պոլիուրեթան, 75% պոլիեսթեր, 25% բամբակ Կադր՝ ոչ հյուսված պոլիպրոպիլեն, պողպատ, պոլիեսթերային բամբակ, մանրաթելային տախտակ, բարձր դիմացկունության պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 60 կգ/խմ Նստատեղի բարձիկ՝ պոլիեսթերային բամբակ, բարձր դիմացկունության պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 60 կգ/խմ			
11	**Աթոռ:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 52 սմ, • խորությունը՝ 50 սմ, • բարձրությունը՝ 87 սմ, • նստատեղի լայնությունը՝ 45 սմ, • նստատեղի խորությունը՝ 36 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 46 սմ, **Գույնը՝ սպիտակ/քրոմապատ** Նյութեր. Ամրապնդված պոլիպրոպիլենային պլաստիկ, պողպատը՝ քրոմապատ Պետք է համապատասխանի EN 12520 և EN 1022 ստանդարտներին:	հատ	5	Կ.66.3
12	**Աթոռ:** **Չափսերը՝** • ընդհանուր բարձրությունը՝ 80 սմ, • լայնությունը՝ 58 սմ, • խորությունը՝ 58 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 47 սմ: **Կտորի գույնը՝ բեժ տեքստիլ** Նյութեր և կոնստրուկցիա՝ Շրջանակ (Frame) - փայտ Նստատեղ - բարձր դիմադրողական պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 60 կգ/մ³	հատ	5	Կ.66.3
13	**Բազմոց:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 95 սմ, • երկարությունը՝ 200 սմ, • բարձրությունը՝ 37 ± 3 սմ, Հիմնակմախքը և կառուցվածքը՝ փայտային կամ լամինացված փայտե շերտեր կամ մետաղյա Տեքստիլ ծածկույթը՝ վերամշակված պոլիեսթեր	հատ	1	Կ.66.4

	Կտորի գույնը՝ մոխրագույն Արմունկի հատվածը՝ ձախից:			
14	**Բազմոց:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 95 սմ, • երկարությունը՝ 200 սմ, • բարձրությունը՝ 37 ± 3 սմ, Հիմնակմախքը և կառուցվածքը՝ փայտային կամ լամինացված փայտե շերտեր կամ մետաղյա Տեքստիլ ծածկույթը՝ վերամշակված պոլիեսթեր **Կտորի գույնը՝ բալագույն** Արմունկի հատվածը՝ աջից	հատ	1	Կ.66.4
15	**Բազմոց:** **Չափսերը՝** • բազկակալի բարձրությունը՝ 72 սմ, • բազկակալի լայնությունը՝ 17 սմ, • խորությունը՝ 93 սմ, • կահույքի տակի բացվածքը՝ 20 սմ, • մեջքի բարձրությունը՝ 70 սմ, • բարձրություն մեջքի բարձիկներով՝ 82 սմ, • նստատեղի խորությունը՝ 61 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 47 սմ, • լայնությունը՝ 231 սմ: **Գույնը՝ մուգ կապույտ/սև** Նյութեր. Կտոր՝ 62% պոլիեսթեր (նվազագույնը 90% վերամշակված), 38% վիսկոզա/ռայոն Նստատեղի շրջանակ՝ լամինացված երեսպատված փայտանյութ, ամուր փայտ, ֆաներա, մասնատախտակ, բարձր դիմացկունության պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 2.2 ֆունտ/խորանարդ ոտնաչափ, մանրաթելային ստվարաթուղթ Գրպանային զսպանակային միավոր՝ պողպատ Շրջանակի/ոտքի տակ՝ պողպատ, էպոքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Մեջքի բարձիկ՝ պոլիուրեթանային փրփուր 1.5 ֆունտ/խորանարդ ոտնաչափ, բարձր դիմացկունության պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 2.2 ֆունտ/խորանարդ ոտնաչափ Կլիպ՝ պոլիպրոպիլեն	հատ	1	Կ.66.4

16	**Բազմոց:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 174 սմ, • խորությունը՝ 78 սմ, • բարձրությունը՝ 75 սմ, • ազատ բարձրությունը կահույքի տակ՝ 22 սմ, • ձեռքի հենակի բարձրությունը՝ 63 սմ, • նստատեղի լայնությունը՝ 160 սմ, • նստատեղի խորությունը՝ 50 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 42 սմ: **Գույնը՝ մուգ փիրուզագույն** Նյութեր. Կտոր՝ 100% պոլիեսթեր (նվազագույնը 90% վերամշակված) Ընդհանուր կազմը՝ 100% պոլիեսթեր Մեջքի և նստատեղի շրջանակ՝ ամուր փայտ Հսպանակ՝ պողպատ Արմունկակալի շրջանակ/Առջևի ծող՝ ամուր հաճարենի, երանգավորված թափանցիկ լաք Մեջքի բարձիկ՝ բարձր դիմացկունության պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 35 կգ/խմ, պոլիուրեթանային փրփուր 30 կգ/խմ Նստատեղի բարձիկ՝ պոլիուրեթանային փրփուր 30 կգ/խմ	հատ	1	Կ.66.5
17	**Բազմոց:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 206 սմ, • խորությունը՝ 92 սմ, • բարձրությունը՝ 81 սմ, • կահույքի տակի բարձրությունը՝ 16 սմ, • բազկակալի լայնությունը՝ 13 սմ, • նստատեղի լայնությունը՝ 180 սմ, • նստատեղի խորությունը՝ 61 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 47 սմ: **Գույնը՝ սև** Նյութեր. Մեջքի և նստատեղի շրջանակ՝ Ֆաներա, ամուր սոճի, մասնատախտակ, մանրաթելային ստվարաթուղթ Արմունկի շրջանակ՝ ֆաներա, ամուր սոճի, պոլիուրեթանային փրփուր 1.5 ֆունտ/խմ, մասնատախտակ, մանրաթելային ստվարաթուղթ Մեջքի բարձիկ՝ պոլիուրեթանային փրփուր 35կգ/խմ Նստատեղի բարձիկ՝ բարձր դիմացկունության պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 30կգ/խմ Հալման դիմացկուն ծածկույթ՝ պոլիեսթերային բամբակ Ծածկված գործվածքի մասեր՝ 100% պոլիուրեթան, 75% պոլիեսթեր, 25% բամբակ	հատ	1	Կ.66.5

	Կաշի՝ ներկված, մշակված, դրոշմված և գունանյութով լցված մակերեսով Ոտք՝ ամուր փայտ, կաղնու ծածկույթ, թափանցիկ լաք, արծաթագույն կամ սև			
18	**Բազմոց:** **Չափսերը՝** • մահճակալի բարձրությունը՝ 53 սմ, • բարձրությունը մեջքի բարձիկներով՝ 85 սմ, • մեջքի բարձրությունը՝ 71 սմ, • լայնությունը՝ 173 սմ, • խորությունը՝ 98 սմ, • ընդհանուր խորությունը ծալված վիճակում՝ 243 սմ, • նստատեղի լայնությունը՝ 173 սմ, • նստատեղի խորությունը՝ 55 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 48 սմ, • մահճակալի լայնությունը՝ 152 սմ, • մահճակալի երկարությունը՝ 202 սմ, • ներքնակի հաստությունը՝ 12 սմ: **Գույնը՝ բաց բեժ, սև մետաղ** Նյութեր. Հալման դիմացկուն ծածկույթ՝ պոլիեսթերային բամբակ Հետևի շրջանակ՝ ամուր փայտ, ֆաներա, մանրաթելային ստվարաթուղթ, պոլիուրեթանային փրփուր 1.2 ֆունտ/խորանարդ ոտնաչափ, մասնատախտակ Առջևի ռելս՝ ֆաներա, մասնիկների տախտակ Նստատեղի բարձիկ՝ բարձր դիմացկունության պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 2.2 ֆունտ/խորանարդ ոտնաչափ Գրպանային զսպանակային միավոր՝ պողպատ Մեջքի բարձիկ՝ 30% կտրված պոլիուրեթանային փրփուր / 70% պոլիեսթերային մանրաթելեր Մահճակալի մեխանիզմ Սոսնձված շերտերի շերտավորում՝ շերտավոր սոսնձված փայտի երեսպատում, կպչուն խեժ՝ որպես ծածկույթ Նստատեղի շրջանակ/Նստատեղի շրջանակ՝ պողպատ, էպոքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Ծածկոց երկտեղանի քնելու հատվածի համար Հետևի գործվածք՝ 100% պոլիեսթեր (100% վերամշակված) Ծածկույթ, այլ մակերեսներ՝ 100% պոլիեսթեր Կտոր՝ 100% պոլիեսթեր (նվազագույնը 90% վերամշակված)	հատ	1	Կ.66.5

19	**Բազկաթոռ:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 80 սմ, • երկարությունը՝ 80 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 45-47 սմ: **Կտորի գույնը՝ բեժ (տեքստիլ)** Ոտքերի գույնը՝ բալագույն ներկված մետաղ Նստատեղը և թիկնակը՝ 1. Բարձր դիմացկուն պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 35 կգ/խմ 2. Հավելյալ փափկության համար՝ փետուրային կամ միկրոֆիբրե լցոնում	հատ	1	Կ.66.6
20	**Փափուկ աթոռ:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 50 սմ, • երկարությունը՝ 50 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 45-47 սմ: **Կտորի գույն՝ բեժ տեքստիլ** Ոտքերի գույնը՝ մուգ կապույտ, մետաղ Նստատեղը և թիկնակը՝ 1. Բարձր դիմացկուն պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 35 կգ/խմ 2. Հավելյալ փափկության համար՝ փետուրային կամ միկրոֆիբրե լցոնում	հատ	2	Կ.66.6
21	**Բազկաթոռ:** Ներքին հիմքը՝ մետաղական կամ փայտե Նստատեղի և մեջքի հատվածում՝ էլաստիկ ժապավեններ կամ պողպատե զսպանակներ Նստատեղը՝ 1. Բարձր դիմացկուն պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 35 կգ/խմ 2. Հավելյալ փափկության համար՝ փետուրային կամ միկրոֆիբրե լցոնում Երեսպատում՝ մուգ կապույտ, բարձր որակի տեքստիլ Ոտքերը՝ մետաղական, սև գույնով ներկված	հատ	2	Կ.66.6
22	**Փափուկ աթոռ:** Տեսակը՝ փափուկ բին բեգ/փուչիկաթոռ Նյութը՝ բարձր ամրության կտոր կամ էկո-կաշի Լցոնիչ՝ պոլիստիրոլային հատիկներ (EPS beads) Չափսեր՝ 90×110 ± 10 սմ Քաշը՝ 4-6 կգ Գույնը՝ դեղին (տեքստիլ) Կառուցվածքից և բաղադրությունից ելնելով պետք է ձևափոխվի ըստ օգտվողի	հատ	1	Կ.66.6

	մարմնի դիրքի, ինչպես նաև պետք է ունենա բռնակ տեղաշարժելու համար:			
23	**Բազկաթոռ:** **Չափսերը՝** • մեջքի բարձրությունը՝ 46 սմ, • լայնությունը՝ 64 սմ, • խորությունը՝ 78 սմ, • բարձրությունը՝ 76 սմ, • բազկակալի բարձրությունը՝ 63 սմ, • նստատեղի լայնությունը՝ 56 սմ, • նստատեղի խորությունը՝ 50 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 45 սմ: **Գույնը՝ բեժ (տեքստիլ)** Նյութեր. Կտոր՝ 100% պոլիեսթեր (նվազագույնը 90% վերամշակված) Ընդհանուր կազմ՝ 100% պոլիեսթեր Մեջքի և նստատեղի շրջանակ՝ ամուր փայտ Ձսպանակ՝ պողպատ Արմունկակալի շրջանակ/Առջևի ծող՝ ամուր հաճարենի, երանգավորված լաք Մեջքի բարձիկ՝ բարձր դիմացկունության պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 2.2 ֆունտ/խորանարդ ոտնաչափ, պոլիուրեթանային փրփուր 2.0 ֆունտ/խորանարդ ոտնաչափ: Նստատեղի բարձիկ՝ պոլիուրեթանային փրփուր 2.0 ֆունտ/խորանարդ ոտնաչափ	հատ	2	Կ.66.6
24	**Բազկաթոռ:** **Չափսերը՝** • մեջքի բարձրությունը՝ 46 սմ, • լայնությունը՝ 64 սմ, • խորությունը՝ 78 սմ, • բարձրությունը՝ 76 սմ, • բազկակալի բարձրությունը՝ 63 սմ, • նստատեղի լայնությունը՝ 56 սմ, • նստատեղի խորությունը՝ 50 սմ, • նստատեղի բարձրությունը՝ 45 սմ: **Գույնը՝ փիրուզագույն/շագանակագույն** Նյութեր Կտոր՝ 100% պոլիեսթեր (նվազագույնը 90% վերամշակված) Ընդհանուր կազմ՝ 100% պոլիեսթեր Մեջքի և նստատեղի շրջանակ՝ ամուր փայտ Ձսպանակ՝ պողպատ Արմունկակալի շրջանակ/Առջևի ծող՝ ամուր հաճարենի, երանգավորված լաք	հատ	1	Կ.66.6

	Մեջքի բարձիկ՝ բարձր դիմացկունության պոլիուրեթանային փրփուր (սառը փրփուր) 2.2 ֆունտ/խորանարդ ոտնաչափ, պոլիուրեթանային փրփուր 2.0 ֆունտ/խորանարդ ոտնաչափ: Նստատեղի բարձիկ՝ պոլիուրեթանային փրփուր 2.0 ֆունտ/խորանարդ ոտնաչափ			
25	**Գրասեղան (բարձրացվող մեխանիզմով):** **Չափսերը՝** • խորությունը՝ 70 սմ, • լայնությունը՝ 120 սմ, • առավելագույն բարձրությունը՝ 122 սմ, • նվազագույն բարձրությունը՝ 72 սմ: **Գույնը՝ սպիտակ/սև մետաղ** Բարձրությունը կարգավորման հնարավորությամբ: Նյութեր. մասնատախտակ, մելամինե փայլաթիթեղ, պլաստիկ եզրեր Ոտքեր՝ պողպատ, էպոքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Բռնակ՝ ամրապնդված պոլիամիդային պլաստիկ Լիսեռ՝ պողպատ, ցինկապատ Խողովակ՝ ալյումին Պետք է համապատասխանի EN 527-2:2002, -3:2003 և ANSI/BIFMA x5.5-2008 ստանդարտներին:	հատ	8	Կ.66.7
26	**Գրասեղան:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 120 սմ, • երկարությունը՝ 120 սմ, • բարձրությունը՝ 75 սմ: Շարժական՝ ծալվող սեղանածածկով գրասեղան (սեղանածածկի ծալման մեխանիզմով) Ոտքեր՝ փայտյա շրջանակ/հիմնական կոնստրուկցիա՝ պողպատ, ներկված սև գույնով Սեղանածածակ՝ սպիտակ (կամ ներկված) մդֆ-ից կամ լամինատ կամ ուժեղացված պոլիամիդ պլաստիկ	հատ	4	Կ.66.7
27	**Գրասեղան (կլոր):** **Չափսերը՝** • տրամագիծը 130 սմ: Ոտքերը՝ պողպատ, ներկված սև գույնով Սեղանածածակը՝ ներկված մդֆ-ից կամ լամինատ կամ ուժեղացված պոլիամիդ պլաստիկ **Գույնը՝ ըստ դիզայնի նախագծի**	հատ	1	Կ.66.7

28	**Գրասեղան (կլոր):** **Չափսերը՝** • տրամագիծը 120 սմ: Ոտքերը՝ պողպատ, ներկված սև գույնով Սեղանածածակը՝ ներկված մդֆ-ից կամ լամինատ կամ ուժեղացված պոլիամիդ պլաստիկ **Գույնը՝ ըստ դիզայնի նախագծի:**	հատ	1	Կ.66.7
29	**Գրասեղան:** **Չափսերը՝** • խորությունը՝ 70 սմ, • լայնությունը՝ 120 սմ, • առավելագույն բարձրությունը՝ 122 սմ, • նվազագույն բարձրությունը՝ 72 սմ: Բարձրությունը կարգավորման հնարավորությամբ: **Գույնը՝ սպիտակ/սև մետաղ** Նյութեր. մասնատախտակ, մելամինե փայլաթիթեղ, պլաստիկ եզրեր Ոտքեր՝ պողպատ, պողպատ, էպոքսիդային/պոլիեսթերային փոշեպատում Բռնակ՝ ամրացված պոլիամիդային պլաստիկ Լիսեռ՝ պողպատ, ցինկապատ Խողովակ՝ ալյումին Պետք է համապատասխանի EN 527-2:2002, -3:2003 և ANSI/BIFMA x5.5-2008 ստանդարտներին:	հատ	1	Կ.66.7
30	**Սուրճի սեղան:** **Չափսերը՝** • տրամագիծը՝ 60 սմ, • բարձրությունը՝ 40 սմ: **Գույնը՝ սև** **Նյութը՝ մետաղ**	հատ	3	Կ.66.8
31	**Սուրճի սեղան:** **Չափսերը՝** • տրամագիծը՝ 60 սմ, • բարձրությունը՝ 40 սմ: **Գույնը՝ դեղին** **Նյութը՝ մետաղ**	հատ	1	Կ.66.8

32	**Սուրճի սեղան:** **Չափսերը՝** • տրամագիծը՝ 35 սմ, • բարձրությունը՝ 47 սմ: **Ներկված մդֆ-ից, գույնը՝ դեղին:**	հատ	1	Կ.66.8
33	**Սուրճի սեղան:** **Չափսերը՝** • տրամագիծը՝ 35 սմ, • բարձրությունը՝ 47 սմ: **Գույնը՝ չժանգոտվող արծաթագույն մետաղ**	հատ	1	Կ.66.8
34	**Սուրճի սեղան:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 35 սմ, • երկարությունը՝ 120 սմ, • բարձրությունը՝ 50 սմ, • սեղանածածկի և ոտքերի հաստությունը 30-36մմ, անկյունը 15-18մմ շառավիղով կորացված: Նյութը՝ բնական քար (տրավերտին՝ անփայլ լաքապատված, հնարավորության դեպքում նաև հիդրոֆոբ նյութով մշակված) կամ ակրիլային քար տրավերտինին մոտ տեսքով Սեղանի անկյունները կորացված	հատ	1	Կ.66.8
35	**Սուրճի սեղան:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 50 սմ, • երկարությունը՝ 110 սմ, • բարձրությունը՝ 45 սմ: **Նյութը՝ ներկված մդֆ-ից** **Գույնը՝ ըստ դիզայնի նախագծի**	հատ	1	Կ.66.8
36	**Սուրճի սեղան:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 50 սմ, • երկարությունը՝ 110 սմ, • բարձրությունը՝ 45 սմ: **Նյութը՝ փայտե շպոնապատ մդֆ-ից** **Գույնը՝ ըստ դիզայնի նախագծի**	հատ	1	Կ.66.8

37	**Սուրճի սեղան:** **Չափսերը՝** • լայնությունը՝ 60 սմ, • երկարությունը՝ 120 սմ, • բարձրությունը՝ 50 սմ: **Գույնը՝ ըստ դիզայնի նախագծի:** Սեղանածակը՝ բնական քար (տրավերտին՝ անփայլ լաքապատված, հնարավորության դեպքում նաև հիդրոֆոբ նյութով մշակված) կամ կերամոգրանիտե սալիկ՝ անկյունները մշակված **Ոտքերը՝ սև մետաղ**	հատ	1	Կ.66.8

ԳՆՈՐԴ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար

---------- Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Անթա» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Աջափնյակ Գ.Չաուշ
հասարակական տարածք 11/5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570092716837100
ՀՎՀՀ 08276453
տնօրեն՝

---------- Ա. Շահինյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների							
		քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
_____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
գնորդի անվանումը վաճառողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.10 կետով սահմանված պահանջներին:

_____
_____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.